365 Ձին, կովը և ոչխարը միասին արժեն 175 ռ.. կովը 3 անգամ և ոչխարը 18 անգամ ձիուց պակաս ար-
ժէին: Ո՞րքան արժէր ձին:

366 Երեք մարդ միասին կալւածք գնեցին դեսեա-
տինը 60 ռուբլով. առաջինը 3 անգամ, իսկ երկրորդը 8 անգամ երրորդից պակաս վճարեց: Քանի՞ դեսեատին հող գնեց իւրաքանչիւրը, եթէ մեզ յայտնի է, որ երրորդը ա-
ռաջինից 9000 ռուբլի պակաս վճարեց:

367 Երեք դեսեատինից ժողովեցին 252 փութ գա-
րի. առաջին դեսեատինից ժողովեցին 2 անգամ երկրոր-
դից աւելի. իսկ երկրորդ դեսեատինից 2 անգամ երրոր-
դից աւելի: Քանի՞ փութ գարի ժողովեցին իւրաքանչիւր դեսեատինից:

368 Ագիւսից երեք տուն շինեցին. առաջին տան վրայ գործածեցին 3 անգամ երրորդից պակաս աղիւս, իսկ երկրորդի վրայ երրորդից 5 անգամ պակաս: Ո՞րքան աղիւս գնաց երկրորդ տան վրայ, եթէ առաջին և երրորդ շինութիւնների համար գործածեցին 200000 աղիւս:

369 Գործարանատէրը բաժանեց բանւորներին մի ամսւայ առճիկ 8352 ռուբլի. կին բանւորները ստացան 7 անգամ պակաս պատանի բանւորներից, իսկ տղամարդիկ 3 անգամ աւելի կանանցից: Ընդամենը քանի՞ բան-
ւոր կար գործարանում, եթէ տղամարդիկ ամսական ըս-
տանում էին 48 ռուբլի, կանայք 28 ռուբ., իսկ պատա-
նիները 12 ռուբլի:

15.

370 Կալւածատէրը ծախեց 48 դեսեատին վարելա-
հող և 104 դեսեատին անտառ. անտառի դեսեատինը ծա-
խեց 264 ռուբլով, իսկ վարելահողի դեսեատինը 109 ռուբլով պակաս: Ստացած գումարից նա 32796 ռուբլին դրեց բանկում, իսկ մնացածով ձիեր գնեց, հատը 75 ռուբլով: Քանի՞ ձի նա գնեց:

371 Երկու վաճառական իրար հետ ապրանք փո-
խանակեցին. առաջինը տւեց 35 փութ շաքար, փութը 5 ռուբլի 60 կոպէկով և 102 ֆունտ թէյ, ֆունտը 2 ռ. 50 կոպէկով, իսկ միւսը տւեց 106 փութ ալիւր, փութը 1 ռուբլի 50 կոպէկով և մի քանի փութ ձաւար, փութը 73 կոպէկով: Քանի՞ փութ ձաւար նա տւեց:

372 Երկու վարպետ մի տուն շինեցին. նրանցից մէկը բանեց 17 օր. օրական 12 ժամ. իսկ միւսը 25 օր, օրական 10 ժամ. երկրորդը առաջինից 6 ռուբ. 90 կոպ. աւելի ստացաւ: Քանի՞ ռուբլի ստացան երկուսը միասին տան շինութեան համար:

16.

373 Մէկը 297 ռուբլով 3 կով և 4 ձի գնեց: Ի՞նչ արժէր մի ձին և մի կովը, եթէ մի ձին 2 անգամ թանգ արժէր:

374 70 ռուբլի 35 կոպէկով գնեցին 37 արշին մա-
հուդ և 25 արշին չիթ: Ո՞րքանով գնեցին մի արշին մա-
հուդը և մի արշին չիթը, եթէ մահուդի արշինը 12 ան-
գամ աւելի արժէ մի արշին չիթից:

375 17 ձի, 36 կով և 9 հորթ կերակրելու համար գործածեցին 246720 փութ խոտ։ Որքան խոտ գործածեցին բոլոր ձիերին կերակրելու համար, եթէ մի ձին 4 անգամ, իսկ մի կովը 5 անգամ հորթից աւել էր կերել։

376 Երկու կազմարար յանձն առան կազմելու 1554 գիրք. առաջին կազմարարը բոլոր գրքերը կարող է կազմել 42 օրում, իսկ երկրորդը՝ 21 օրում։ Քանի՞ օրում կարող են նրանք կազմել բոլոր գրքերը, եթէ միասին աշխատեն։

377 Գինու մառանը հեղեղից 10710 վեդրօ ջուր էր լցել. այդ ջուրը դուրս լծափելու համար 3 ջրհան գրին. առաջին ջրհանով բոլոր ջուրը կը հանւի 90 ժամում, երկրորդով՝ 126 ժամում, իսկ երրորդով՝ 21 ժամում։ Քանի՞ ժամում բոլոր ջուրը կը հանւի 3 ջրհանով միասին։

378 16 միատեսակ գանգեր և 16 միատեսակ թընդանօթներ 8160 փութ ծանրութիւն ունին։ Որքա՞ն է իւրաքանչիւր գանգի և իւրաքանչիւր թնդանօթի քաշը, եթէ մի գանգը 344 փութով թնդանօթից ծանր է։

379 28 միատեսակ կաթսաներ և 28 մեքենայի մոծ անիւներ պատրաստելու համար գործածեցին 21280 փ. չուգուն։ Ի՞նչ ծանրութիւն ունի իւրաքանչիւր կաթսան և իւրաքանչիւր անիւը, եթէ բոլոր կաթսաների համար գործածեցին 3808 փութ աւելի չուգուն, քան թէ բոլոր անիւների համար։

380 Աշակերտը 26 կոպէկով մի տետրակ և 5 մատիտ գնեց։ Որքա՞ն արժէ մի տետրակը և որքա՞ն մի մատիտը, եթէ մեզ յայտնի է, որ իւրաքանչիւր մատիտը տետրակից 2 կոպէկ պակաս արժէ։

381 93 ռուբլով գնեցին 48 փութ գարու ալիւր, 37 փութ ցորենի ալիւր և 14 փութ բրինձ. բրնձի փութը արժէր 90 կոպէկ, ցորենի ալիւրի փութը բրնձից

30 կոպէկով թանկ։ Որքա՞նով գնեցին գարու ալիւրի փութը։

382 Վաճառականը գնեց փութը 6 ռուբլով 28 տակառ շաքար, իւրաքանչիւր տակառում կար 15 փութ։ Ճանապարհածախս նա վճարեց 36 ռուբլի. ծախսած իւրաքանչիւր 9 ռուբլուն նա վաստակեց 1 ռուբ. 50 կ.։ Ընդամենը որքա՞ն փող նա վաստակեց։

383 Վաճառականը կալւածատիրոջից գնեց 245 հակ ոչխարի բուրդ, իւրաքանչիւրը 8 փութից, փութը 22 ռուբլով։ Բոլոր բուրդը լանալուց յետոյ ամեն մի 56 փութից նա ստացաւ 47 փութ մաքուր բուրդ. մաքուր բուրդը ծախեց և ծախսած իւրաքանչիւր 11 ռուբլուց վաստակեց 75 կոպէկ։ Քանի՞սով ծախեց նա բրդի փութը։

384 Առևտրականը 4536 ռուբլով ծախեց 56 ձի. ծախսած իւրաքանչիւր 100 ռուբլուց նա 8 ռուբլի վաստակեց։ Որքա՞նով էր նա գնել իւրաքանչիւր ձին։

385 Մանրավաճառը սուրճի փունտը գնեց 60 կոպէկով. ճանապարհին 40 փունտանոց մի արկղ սուրճը կորաւ, այդ պատճառով սուրճի մի փունտը նստեց նրան ոչ թէ 60 կոպէկ, այլ 64 կոպէկ։ Որքա՞նով գնեց նա բոլոր սուրճը։

386 Մի մարդ խանութին պատւիրեց 15 ֆ. սուրճ և 42 փունտ շաքար։ Այդ ապրանքին վճարելու էր 15 ռուբլի 12 կոպէկ. բայց ուրուհետև նա իր մօտ ունէր միմիայն 12 ռուբլի 88 կոպէկ, դրա համար ստիպւած եղաւ վերցնել պատւիրած սուրճը և շաքարից միայն 28 փունտ։ Որքա՞ն արժէր սուրճի մի փունտը և շաքարի մի փունտը։

387 Երեք գրպիր 55 ռուբլի 36 կոպէկով արտադրեցին մի ձեռագիր։ Որքա՞ն ստացաւ իւրաքանչիւրը, եթէ առաջինը աշխատել էր 8 օր, օրական 7 ժամ, երկրորդը՝

9 օր, օրական 6 ժ., իսկ երրորդը՝ 7 օր, օրական 9 ժ.:

388 Երեք եղբայր միասին մի տուն ժառանգեցին, նրանք այդ տունը 76800 ռուբլով ծախեցին և փողերը բաժանեցին հետևեալ կերպով. աւագ եղբայրը առաջ ամբողջի երեք ութերորդականը, միջնակը մնացածի եօթ քառերորդականը, իսկ ամենափոքրը՝ մնացորդը. վերջին եղբայրն իր փողերով մի կալւածք գնեց, գնահատինը 52 ռուբլով: Քանի գնահատին էր նրա գնած կալւածքը:

389 Երեք վաճառական մահուդ գնեցին արշինը 3 ռուբլի 90 կոպէկով. առաջինը վճարեց 218 ռուբ. 40 կ., երկրորդը՝ առաջինի տաճի եօթ ութերորդականը, իսկ երրորդը՝ 2 անգամ առաջինից պակաս: Առաջին վաճառականը մահուդի արշինը ծախեց 4 ռուբլով, երկրորդը՝ 4 ռուբլի 10 կոպ., իսկ երրորդը՝ 4 ռուբ. 20 կոպէկով: Որքան վաստակեցին նրանք միասին:

390 Խանութպանը մի գնողին 3 ռուբ. 72 կ. ծախեց 15 արշին չիթ և 8 արշին կտաւ, իսկ միւսին 2 ռ. 76 կոպ.՝ 7 արշին չիթ և 8 արշին կտաւ: Ո՞րքանով նա ծախեց չիթի արշինը և կտաւի արշինը:

391 Առևտրականը 186 ռ. 50 կ. գնեց 9 չետվերտ ցորեն և 25 չետվերտ հաճար, վճարելով մի չետվերտ հաճարին և մի չետվերտ ցորենին 12 ռուբ. 90 կոպ. Ո՞րքան վճարեց նա մի չետվերտ ցորենին և մի չետվերտ հաճարին:

392 Դերձակը 154 ռուբլի 10 կոպ. գնեց 13 արշին կապոյտ և 45 արշին սև մահուդ, վճարելով մի արշին կապոյտ և մի արշին սև մահուդին 5 ռուբ. 70 կոպ.: Որքան պէտք է վճարէր նա 45 արշին կապոյտ և 13 արշին սև մահուդին:

393 Կալւածատէրը 1240 ռուբլով ծախեց 76 կով

և ոչխար. ամեն մի կովը նա ծախեց 48 ռուբ., իսկ իւրաքանչիւր ոչխարը 5 ռուբլով: Քանի կով և քանի ոչխար նա ծախեց:

394 Դարձարանում աշխատում էին 40 տղամարդ և կինմարդ բանւորներ. իւրաքանչիւր տղամարդին ամսական տանում էր 28 ռուբլի, իսկ իւրաքանչիւր կինմարդը՝ 18 ռուբլի: Քանի տղամարդ և քանի կինմարդ բանւոր կար դարձարանում, եթէ բոլորն ամսական տանում էին 990 ռուբլի:

395 Վարձեցին մի բանւոր այն պայմանով, որ օրական տանայ 1 ռուբլի 20 կոպէկ, իսկ չբանած օրը նրա վարձից կտրել օրական 40 կոպէկ. 30 օրից յետոյ բանւորին վճարեցին 24 ռ. 80 կ.: Քանի օր նա բանեց:

II. ԲԱՐԴ ԱՆԻԱՆԱԿԱՆ ԹԻԵՐ

1. ՎԵՐԱԾՈՒՄՆ

վերածել՝

396 56 ռուբ.—կոպեկների։
397 317 ռուբ. 50 կոպ.—կոպեկների։
398 518 ռուբ. 7 կոպ.—կոպեկների։

399 56 սաժէնը—վերշոկների։
400 158 սաժ. 2 արշ.—վերշոկների։
401 347 սաժ. 1 արշ.—վերշոկների։
402 52 սաժ. 2 արշ. 3 վերշ.—վերշոկների։
403 436 սաժ. 7 վերշ.—վերշոկների։
404 5 վերստ 115 սաժ.—արշիններով։
405 4 վերստ 203 սաժ. 2 արշ.—արշիններով։
406 1 վերստ 216 սաժ. 4 վերշ.—վերշոկների։
407 3 վերստ 472 սաժ. 2 արշ. 14 վերշ.—վերշոկների։
408 5 մղոնը—արշիններով։
409 7 մղոն 2 վերստ—արշիններով։
410 2 մղոն 3 վերստ 160 սաժ.—արշիններով։
411 12 մղոն 456 սաժ.—արշիններով։
412 7 մղոն 3 վերստ 416 սաժ. 1 արշ.—արշիններով։
413 38 սաժէնը—մատնաչափերի։
414 156 սաժէն 4 ոտնաչափը—մատնաչափերի։
415 48 սաժէն 6 ոտնաչ. 9 մատնաչ.—մատնաչափերի։
416 150 սաժ. 7 մատնաչ.—մատնաչափերի։
417 4 վերստը—ոտնաչափերի։
418 2 մղոն 156 սաժ.—ոտնաչափերի։

419 3 մղոն 2 վերստ 146 սաժ. 2 ոտնաչափ.—ոտնաչափերի։
420 45 սաժ. 4 ոտնաչ.—գծաչափերի։
421 120 սաժ. 3 մատնաչ. 5 գծաչափը—գծաչափերի։
422 156 սաժ. 2 արշ.—մատնաչափերի։
423 488 սաժ. 1 արշ.—մատնաչափերի։

424 17 փութը—լծաների։
425 12 փութ 3 ֆունտը—մխալների։
426 5 լծառը—գոլիաններով։
427 15 լծա 2 մխալը—գոլիաններով։
428 2 ֆունտ 13 լծա 1 մխալը—մխալներով։
429 48 փութ 16 ֆունտ 15 լծառը—լծաներով։
430 47 փութ 28 լծառը—լծաներով։
431 565 փութ 12 ֆունտը—լծաներով։
432 7 ֆունտ 3 լծա 2 մխալը—գոլիաններով։
433 5 փութ 14 ֆունտ 17 լծառը—մխալներով։
434 14 փութ 15 լծա 1 մխալը—մխալներով։
435 148 փութ 26 ֆունտ 23 լծա 2 մխալը—մխալներով։

436 6 չեռվերտը—գարնցներով։
437 7 չեռվերտ 4 չեռվերտիկը—գարնցներով։
438 15 չտ. 3 չկ. 7 գարնցը—գարնցներով։
439 85 չտ. 7 չկ. 5 գարնցը—գարնցներով։

440 35 վեդրօն—շտոֆներով։
441 7 տակառ 6 վեդրօ 8 շտոֆը—շտոֆներով։
442 85 տակառ 36 վեդրօ 4 շտոֆը—շիշերով։

443 7 օզման—թևրթևերով։
444 8 օզմա 4 դաստան—թևրթևերով։
445 124 օզմա 12 դաստա 15 թևրթը—թևրթևերով։
446 46 օզմա 15 թևրթը—թևրթևերով։

447 8 ժամը—րոպէների։
448 7 ժամը—վայրկեաններին։
449 5 չաբաթ 2 օրը—ժամերի։
450 7 չաբաթ 3 օր 17 ժամը—ժամերի։
451 2 օր 3 ժամ 46 րոպէն—վայրկեաններին։
452 8 օր 7 ժամ 15 րոպէ 15 վայրկեանը—վայրկեաններին։
453 8 չաբաթ 5 օր 17 ժամը—վայրկեաններին։
454 1 չաբաթ 8 օր 12 ժամ 4 րոպէ 12 վայրկ.—վայրկեաններին։

---

2. ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆ

Անդրադարձնել՝

455 17000 կոպէկը։
456 18074 կոպէկը։
457 48006 կոպէկը։
458 50008 կոպէկը։
459 3552 վերշօկը։
460 8736 վերշօկը։
461 19265 արշինը։
462 16248 արշինը։
463 164564 արշինը։
464 865976 արշինը։
465 53764 ֆունտը։
466 186517 մատնաչափը։
467 374564 ոտնաչափը։
468 416577 մատնաչափը։
469 1365732 ոտնաչափը։

Անդրադարձնել՝

470 5486316 մատնաչափը։
471 75800 գծաչափը։
472 8516486 գծաչափը։
473 9640212 գծաչափը։
474 87364 վերշօկը։
475 576496 գծաչափը։
476 387465 սաժէնը։
477 863241 գծաչափը։
478 73644 գծաչափը։
479 720 ֆունտը։
480 83712 լօտը։
481 40074 մխալը։
482 4096 լօտը։
483 35648 լօտը։
484 57711 մխալը։

Անդրադարձնել՝

485 84756 մխալը։
486 138417 մխալը։
487 172800 դօլիան։
488 365184 դօլիան։
489 967416 դօլիան։
490 464400 դօլիան։
491 4728 չեավերիկը։
492 7868 գարնցը։
493 57648 գարնցը։
494 375542 գարնցը։
495 871184 գարնցը։
496 391680 գարնցը։
497 391680 գարնցը։
498 5600 շաւոֆը։

Անդրադարձնել՝

499 37800 շաւոֆը։
500 14216 շաւոֆը։
501 43564 շաւոֆը։
502 960 թերթը։
503 18400 թերթը։
504 56476 թերթը։
505 73648 թերթը։
506 8642 րոպէն։
507 35660 վայրկեանը։
508 18972 վայրկեանը։
509 76356 վայրկեանը։
510 89464 վայրկեանը։
511 57600 վայրկեանը։

---

3. ԳՈՒՄԱՐՈՒՄՆ

512 (57 սաժ. 1 արշ. 6 վերշ.)+(138 սաժ. 1 արշ. 8 վերշ.)=
513 (456 սաժ. 2 արշ. 9 վերշ.)+(312 սաժ. 2 արշ. 8 վերշ.)=
514 (176 սաժ. 4 ոտնաչ. 9 մատնաչ.)+(416 սաժ. 6 ոտնաչ. 3 մատնաչ.)=
515 (4 վերստ 56 սաժ. 4 ոտնաչ. 7 մատնաչ.)+(2 վերստ 416 սաժ. 6 ոտնաչ. 5 մատնաչ.)=
516 (5 փութ 36 ֆունտ 18 լօտ)+(7 փ. 24 ֆ. 24 լ.)=
517 (38 փ. 16 ֆ. 13 լ. 2 մխ.)+(56 փ. 27 լ. 1 մխ.)=
518 (217 չո. 4 չկ. 2 գարնց)+(318 չո. 4 չկ. 7 գարնց)=

519 (516 չ. 7 գարնց)+(419 չ. 3 չկ.)=

520 (78 տակ. 23 վեդ. 4 շ.)+(86 տակ. 15 վեդ. 9 շ.)=

521 (415 տակառ 3 շոօֆ)+(213 տակառ 7 շոօֆ)=

522 (56 օդմա 19 դաստա 20 թևրթ)+(46 օդմա 18 դաստա 12 թևրթ)=

523 (840 օդմ. 16 թևր.)+(250 օդմ. 19 դաստ. 14 թևր.)=

524 (5 օր 14 ժամ 46 րոպէ 28 վայրկեան)+(3 օր 15 ժամ 40 րոպէ 14 վայրկեան)=

525 (8 շաբաթ 6 օր 12 ժամ 15 րոպէ)+(19 շաբաթ 4 օր 23 ժամ 45 րոպէ)=

526 (18 չ. 6 չկ. 4 գարնց)+(19 չ. 4 գարնց)+(48 չ. 5 չետվերիկ)=

527 (25 վեդրօ 2 շոօֆ)+(27 տակառ 36 վեդրօ 4 շոօֆ)++(83 տակառ 8 շոօֆ)=

528 (12 փութ 14 լօտ 1 մսխալ 95 դոլիա)+(48 փ. 17 ֆ. 2 մսխալ 13 դոլիա)+(56 փութ 26 լօտ 84 դոլիա)=

529 (5 շաբաթ 4 օր 13 ժամ 4 րոպէ)+(18 շաբաթ 16 ժամ 56 վայրկեան՝)+(48 շաբ. 18 ժամ 55 րոպէ 4 վայրկ.)=

530 (58 փ. 13 ֆ. 32 դոլիա)+(126 փ. 27 ֆունտ 31 լօտ 48 դոլ.)+(15 ֆ. 2 մսխ.)+(48 փ. 36 ֆ. 23 լ. 1 մսխ. 16 դոլ.)=

531 (36 մղոն 4 վերստ 420 սաժէն 3 ոտնաչ. 6 մատնաչափ 7 գծաչափ.)+(48 մղոն 317 սաժ. 6 ոտնաչ. 5 գծաչափ)+(73 մղոն 5 վերստ 4 ոտնաչ. 11 մատնաչ.)+(63 մղոն 176 սաժ. 7 մատնաչափ 8 գծաչափ)=

---

532 *Երեք գիւղացի ջրաղացը ցորեն բերին. առաջին գիւղացին բերեց* 30 *փութ* 16 *ֆունտ, երկրորդը՝* 28 *փութ* 23 *ֆունտ, իսկ երրորդը՝* 36 *փութ* 34 *ֆունտ։ Ընդամենը օրքան ցորեն նրանք բերին ջրաղացը։*

533 *Կալւածատէրն իր ունեցած ցորենը պահել էր* 3 *ամբարում. առաջին ամբարում կար* 75 *չ.* 2 *չկ.* 3 *գարնց, երկրորդում՝* 87 *չ.* 7 *չկ.* 6 *գարնց, իսկ երրորդում* 78 *չ.* 6 *չկ.։ Ընդամենը օրքան ցորեն ունէր կալւածատէրը։*

534 *Ճանապարհորդն առաջին օրն անցաւ* 46 *վերստ* 356 *սաժէն, երկրորդ օրը՝* 40 *վերստ* 72 *սաժէն, իսկ երրորդ օրը՝* 41 *վերստ* 417 *սաժ.։ Ի՞նչ տարածութիւն նա անցաւ* 3 *օրում։*

535 *Դրավաճառը* 3 *գլուք հրատարակեց. առաջին գլքին գնաց* 57 *օդմա* 16 *դաստա* 23 *թևրթ թուղթ, երկրորդ գլքին՝* 89 *օդմա* 18 *դաստա* 20 *թևրթ, իսկ երրորդ գլքին՝* 75 *օդմա* 16 *դաստա* 14 *թևրթ։ Ընդամենը օրքան թուղթ գնաց* 3 *գլքի հրատարակութեան համար։*

536 *Ճանապարհորդը մի շաբաթ* 3 *օր* 15 *ժամ ընթացքում էրզրումից Թիֆլիս հասաւ և* 2 *շաբաթ* 18 *ժամ ընթացքում Թիֆլիզից էրզրում վերադարձաւ։ Օրքան ժամանակ նա ճանապարհորդեց։*

537 *Վաճառականը* 2 *վագոն շաքար ստացաւ. առաջին վագոնում կար* 517 *փութ* 13 *ֆունտ, իսկ երկրորդում՝* 49 *փութ* 28 *ֆունտ աւելի։ Ընդամենը օրքան շաքար նա ստացաւ։*

538 *Ջոզեկառքն առաջին ժամում անցաւ* 25 *վերստ* 126 *սաժէն* 1 *արշ, տարածութիւն, երկրորդ ժամում՝* 7 *վերստ* 315 *սաժէն աւելի, իսկ երրորդ ժամում՝* 9 *վերստ* 17 *սաժէն երկրորդ ժամից աւելի։ Օրքան տարածութիւն անցաւ շոզեկառքը* 3 *ժամում։*

339 *Գինեվաճառն առաջին օրը ծախեց* 73 *տակառ* 5 *վեդրօ* 6 *շոօֆ գինի, երկրորդ օրը՝* 7 *տակառ* 4 *շոօֆ աւելի, իսկ երրորդ օրը՝* 9 *տակառ* 8 *վեդրօ* 1 *շոօֆ ա-*

առաջին օրից աւելի։ Ընդամենը որքան դինի ծախեց նա 3 օրում։

540 Գարնջրատնից մի մարդ գնեց 78 տակառ 16 վեդրօ գարեջուր, երկրորդը՝ 3 տակառ 12 վեդրօ աւելի, իսկ երրորդը՝ այնքան, որքան գնեցին առաջինը և երկրորդը միասին։ Ընդամենը որքան գարեջուր գնեցին նրանք։

541 Շոգենաւն առաջին օրն անցաւ 116 վերստ 310 սաժ. տարածութիւն, երկրորդ օրը՝ 8 վերստ 417 սաժ. աւելի, երրորդ օրը՝ այնքան, որքան առաջին երկու օրում միասին, իսկ չորրորդ օրը՝ 56 վ. 178 սաժ. երկրորդ օրից աւելի։ Որքան տարածութիւն անցաւ շոգենաւը 4 օրում։

---

4. ՀԱՆՈՒՄՆ

542 (320 սաժ. 2 արշ. 15 վերշօկ)—(157 սաժէն 1 արշին 14 վերշօկ)=

543 (256 փ. 17 ֆ. 15 լօտ)—(119 փ. 25 ֆ. 16 լօտ)=

544 (48 չտ. 2 չկ. 3 գարնց)—(15 չտ. 7 չկ. 4 գարնց)=

545 (64 տակ. 35 վեդրօ 4 շտ.)—(17 տակ. 8 շտ.)=

546 (56 օգմա 20 թերթ)—(13 օգմ. 18 դաստ. 23 թերթ)=

547 (3 շար. 4 օր 14 ժամ 18 րոպէ)—(2 շար. 5 օր 56 րոպէ)=

548 216 սաժ.—(158 սաժ. 3 ատնաչ. 7 մատնաչ.)=

549 64 փութ—(52 փութ 16 ֆունտ 3 լօտ 2 մխալ)=

550 512 տակառ—(316 տակառ 28 վեդրօ 4 շտօֆ)=

551 49 օգմա—(12 օգմա 15 դաստա 21 թերթ)=

552 80 շաբաթ—(35 շաբաթ 4 օր 58 րոպէ)=

553 (415 վերստ 4 մատնաչ.)—(167 վերստ 218 սաժ. 4 ատնաչ. 8 մատնաչ.)=

554 (560 չտ. 3 գարնց)—(217 չտ. 7 գարնց)=

555 (381 տակ. 2 շտ.)—(58 տակ. 7 շտ.)=

556 (80 շաբաթ 35 րոպէ)—(14 շաբաթ 5 օր 47 րոպէ)=

557 (56 մղոն 2 արշ.)—(13 մղոն 118 սաժ. 2 արշ. 14 վերշ.)=

558 (475 փ. 2 մխ.)—(313 փ. 16 ֆ. 2 մխ. 25 դօլ.)=

559 (57 շար. 3 օր)—(14 շար. 6 օր 16 ժամ 13 վայրկ.)=

560 (1836 փութ 1 մխալ)—(167 փութ 36 ֆունտ 13 լօտ 1 մխալ 32 դօլիա)=

---

561 Խանութում կար 15 փութ 32 ֆունտ սուրճ, որից 7 փութ 38 ֆունտ 24 լօտը ծախեցին։ Որքան սուրճ մնաց խանութում։

562 Շոգեկառքը մի օրում անցաւ 600 վերստ 300 սաժէն տարածութիւն, իսկ շոգենաւը՝ 246 վերստ 415 սաժէն։ Որքան տարածութիւն շոգեկառքը աւելի անցաւ։

563 Կալւածատէրը մէկի վրայ ծախեց 163 չտ. 2 չկ. 4 գարնց ցորեն, իսկ միւսի վրայ 15 չտ. 7 չկ. 6 գարնց պակաս։ Ընդամենը որքան ցորեն ծախեց կալւածատէրը։

564 Մի մառանում կար 512 տակառ դինի, իսկ միւսում՝ 16 տակառ 5 վեդրօ պակաս։ Առաջին մառանից ծախեցին 170 տակառ 14 վեդրօ 4 շտօֆ, իսկ երկրորդից՝ 147 տակ. 25 վեդ. 9 շտ.։ Ո՞ր մառանում աւելի դինի մնաց և քանիսով աւելի։

565 Մեքենան առաջին օրը բանեց 15 ժամ 26 րոպէ 40 վայրկեան, երկրորդ օրը՝ 4 ժ. 17 ր. 55 վայրկ. պակաս, երրորդ օրը՝ 18 ժ. 40 ր. 26 վ. պակաս, քան թէ առաջին և երկրորդ օրը միասին։ Որքան ժամանակ բանեց մեքենան երրորդ օրը։

566 Մի գրասենեակի համար առաջին տարին գոր-

ծածկին 27 օգմա 14 թերթ թուղթ, երկրորդ տարին՝ 9 օգմա 16 դաստա 20 թերթ պակաս, իսկ երրորդ տարին՝ 1 օգմա 5 դաստա 15 թերթ ակաս, քան թէ երրորդ տարին։ Որքա՞ն թերթ թուղթ գործածեցին 3 տարում։

567 Ճանապարհորդն առաջին օրն անցաւ 46 վերստ 150 սաժ. տարածութիւն, երկրորդ օրը՝ 3 վերստ 57 սաժ. պակաս, իսկ երրորդ օրը՝ 50 վերստ 482 սաժ. պակաս, քան թէ առաջին և երկրորդ օրը միասին։ Որքա՞ն տարածութիւն անցաւ ճանապարհորդը 3 օրում։

568 Հեռագրաթելերը նորոգելու համար հարկաւոր եկաւ 4 թոփ երկաթէ լար. առաջին թոփը 25 սաժէն 6 ֆունտ երկարութիւն ունէր, երկրորդը՝ 3 սաժ. 4 մատնաչափ պակաս, երրորդը՝ 1 սաժ. 2 ոտնաչափ երկրորդից աւելի և չորրորդը՝ 8 սաժ. 6 մատնաչափ երրորդից պակաս։ Ի՞նչ երկարութիւն ունէր չորրորդ թոփը։

569 Երեք խումբ բանուորներ կեռակրելու համար գործածեցին 627 փութ 20 ֆունտ հայ. առաջին խումբը ստացաւ 240 փ., իսկ երկրորդը 17 փութ 13 ֆունտ պակաս։ Որքա՞ն հայ ստացաւ երրորդ խումբը։

570 Երկու ալափ միասին ծախեցին 1876 փութ 30 ֆունտ յորեն. առաջինը ծախեց 946 փութ 36 ֆունտ։ Ո՞ր ալափն աւելի յորեն ծախեց և քանիսո՞վ։

---

5. ԲԱԶՄԱՊԱՏԿՈՒՄՆ

571 (15 սաժ. 2 արշ.)×12=
572 (8 չո. 5 չկ. 3 գրց.)×14=
573 (6 օգմա 14 դաստա 10 թերթ)×18=
574 (186 սաժ. 3 ոտնաչ. 10 մատնաչ.)×16=
575 (12 չո. 4 գարնց)×15=
576 (8 տակ. 7 շտոֆ)×32=

577 (3 վերստ 140 սաժ. 6 ոտնաչ. 7 մատնաչ.)×48=
578 (7 տակ. 36 վեդ. 5 շտ.)×60=
579 (17 չո. 4 չկ. 5 գրց)×40=
580 (86 մղոն 15 սաժ.)×75=
581 (3 փ. 14 ֆ. 12 լ.)×8=
582 (96 տակ. 16 վեդ. 3 շտ.)×15=
583 (4 ժամ 15 րոպէ 25 վայրկեան)×24=
584 (54 սաժ. 4 մատնաչ.)×17=
585 (8 փութ 12 լօտ)×24=
586 (5 օր 24 րոպէ)×150=
587 (7 շաբ. 2 օր 35 րոպէ 20 վայրկ.)×6=
588 (12 օգմա 14 դաստա 15 թերթ)×64=
589 (3 օր 12 ժամ 15 րոպէ)×84=
590 (3 ֆունտ 1 մախ. 12 դոլիա)×72=

---

591 Մեքենան մի րոպէում շինում է 156 սաժ. 3 ոտնաչ. 2 մատնաչ. երկարութեան մետաղէ լար։ Որքա՞ն լար կը շինէ 12 րոպէում նոյն մեքենան։

592 Մի վեդրօ կաթի ծանրութիւնը 30 ֆունտ 24 լօտ 2 մախալէ։ Ի՞նչ ծանրութիւն ունի 25 վեդրօ կաթը։

593 Երկու սայլով հաճար բերին. առաջին սայլում կար 7 չուալ, իւրաքանչիւրում 4 փութ 26 ֆունտ հաճար, իսկ երկրորդ սայլում՝ 6 չուալ, իւրաքանչիւրում 5 փութ 12 ֆունտ։ Ընդամենը որքա՞ն հաճար բերին։

594 Մի օրում պատրաստում են 2 տակառ 32 վեդրօ 6 շտոֆ օղի։ Որքա՞ն օղի կը պատրաստեն 2 շաբաթ և 2 օրւայ ընթացքում, եթէ տօն օրերն էլ աշխատեն։

595 Մի տպարանում մի տարւայ ընթացքում գործածեցին 1076 օգմա 19 թերթ թուղթ, իսկ միւս տպարանում՝ 8 անգամ աւելի։ Ընդամենը որքա՞ն թուղթ գործածեցին երկու գործարանում մի տարւայ ընթացքում։

596 Բանուորը մի օրում բանում է 11 ժամ 56 րոպէ։ Որքան ժամանակ կը բանէ նա 56 օրում։

597 Մի ձի կերակրելու համար մի տարւայ ընթացքում գործածեցին 4 փութ 30 ֆունտ խոտ։ Որքան խոտ է հարկաւոր 15 ձի կերակրելու համար 8 ամսւայ ընթացքում։

598 Գործարանատէրը 8 խանութպանի վրայ մախսուր ծախեց. իւրաքանչիւր խանութպան գնեց 9 թոփ, ամեն մի թոփում կար 48 արշ. 4 վերշ.։ Ո՞րքան մախսուր ծախեց գործարանատէրը։

599 Գիւղացին 12 դեսեատին հող ունէր. իւրաքանչիւրում 1 չո. 3 չկ. 7 գարնց հաճար ցանեց և 1—8բերք ստացաւ։ Ընդամենը որքան հաճար նա ժողովեց։

600 24 բանուր 5 օրում մի շոգենաւ ցօրենով բարձեցին, բանելով օրական 10 ժամ։ Որքան ցորեն նրանք բարձեցին, եթէ իւրաքանչիւրը բանուրը մի ժամում բարձում էր 20 փութ 16 ֆունտ։

---

6. ԲԱԺԱՆՈՒՄՆ

601 (481 սաժէն 2 արշին):5=

602 (56 փութ 14 ֆունտ 16 լօտ):32=

603 (68 օգմա 11 դասատ 21 թերթ):25=

604 (214 չո. 7 չկ. 3 գարնց):15=

605 (245 սակառ 11 վեդրօ 2 շօֆ):64=

606 (230 շաբաթ 6 օր):80=

607 153 չո. : 48=

608 573 սակ. : 25=

609 356 փութ : 96=

610 476 օգմա : 64=

611 137 մղոն : 84=

612 (58 չո. 3 չկ. 2 գարնց):7 գարնցի=

613 (56 փութ 10 ֆունտ):18 լօտի=

614 (39 սակառ. 4 վեդ.):(3 վեդ. 4 շօֆ)=

615 (182 վերստ 487 սաժ. 5 ոտնաչ. 8 մատնաչ.):(14 վերստ 37 սաժ. 3 ոտնաչ. 8 մատնաչ.)=

616 (139 փ. 14 ֆ. 5 լ. 1 մսխ.):(17 փ. 16 ֆ. 24 լ. 2 մսխ.)=

617 (706 օգմա 17 դասատ 16 թերթ):(4 օգմա 16 դասատ 20 թերթ)=

618 (76 վերստ 110 սաժէն 1 աշբին 14 վերշօկ):(5 վերստ 40 սաժ. 2 արշ. 2 վերշ.)=

619 (15 շաբ. 19 ժամ 57 րոպէ):(1 շաբ. 13 ժամ 25 րոպէ 30 վայրկեան)=

620 (17 օր 4 ժամ 36 րոպէ):(3 ժամ 26 րոպէ 18 վայրկ.)=

621 (138 օգմ. 3 դասատ.):(1 օգմ. 18 դասատ. 9 թերթ)=

622 (707 փ. 29 ֆունտ 90 մսխ.):(27 փ. 8 ֆ. 81 մսխ.)=

623 (341 փ. 12 ֆունտ 7 լօտ 2 մսխ.):(68 փութ 10 ֆունտ 14 լօտ 1 մսխալ)=

---

624 Բանուրները կերակրելու համար գնեցին 46 փ. 14 ֆունտ ալիւր, որը 9 շաբաթւայ ընթացքում սպառեցին։ Որքան ալիւր էին գործածում շաբաթական։

625 Ճանապարհորդը 7 օրում անցաւ 533 վերստ 74 սաժ. տարածութիւն։ Ո՞րքան տարածութիւն էր նա անցնում մի օրում։

626 12 գիւղացի հասարակական ամբարից ստացան 210 չո. 4 չկ. 4 գարնց ցորեն։ Ո՞րքան ցորեն ստացաւ իւրաքանչիւր գիւղացին։

627 Ընկուզը 210 սաժ. 5 ոտնաչափ տարածութեան վրայ 250 պտոյտ արաւ։ Որոշել անիւի չրջապատը։

628 Տպարանում 6 օրւայ մէջ գործածեցին 715 օգմա 6 դաստա 18 թերթ թուղթ։ Ո՞րքան թուղթ էին գործածում օրական։

629 Դիւղացին ժողովեց 79 չտ. 6 չկ. 6 գարնց ցորեն։ Ո՞րքան ցորեն էր ցանե նա, եթէ բերքը 1—7 էր։

630 Ձիերի համար գնեցին 184 չտ. 1 չկ. 7 գարնց վարսակ։ Քանի՞ շաբաթ է բաւական բոլոր վարսակը, եթէ օրական բոլոր ձիերն ուտում են 14 չտ 1 չկ. 3 գարնց։

631 Գնեցին 8 ղլուխ շաքար. իւրաքանչիւրի քաշը 21 ֆ. 8 լօտ էր։ Քանի՞ շաբաթ բաւական կանէ բոլոր շաքարը, եթէ օրական գործածեն 3 ֆ. 17 լօտ 1 մսխ.։

632 Դիւղից մինչև քաղաք 72 վերստ 245 սաժէն տարածութիւն է։ Քանի՞ ժամ դիւղացին ճանապարհին կը լինի, եթէ մի ժամում անցնելիս լինի 4 վերստ 416 սաժ. 1 արշ. տարածութիւն և ճանապարհին էլ 6 ժամ հանգստանայ։

633 Շոգենաւն իւրաքանչիւր 4 ժամում անցնում է 49 վերստ 206 սաժ. 2 ոտնաչ. տարածութիւն։ Քանի՞ ժամում կանցնի նա 617 վերստ 328 սաժէն 4 ոտնաչափ տարածութիւնը։

634 Մի ժամում պատրաստում են 17 օգմա 10 դաստա թուղթ։ Քանի՞ օրում կը պատրաստեն 2275 օգմա թուղթը, եթէ բանւորները աշխատեն օրական 13 ժամ։

635 2 խողովակ ունեցող աւազանում մտնում է 183 տակ. 19 վեդ. 5 շտօֆ ջուր, մի խողովակով իւրաքանչիւր 3 ժամում ներս է թափւում 17 տակ. 15 վեդրօ 4 շտօֆ ջուր, իսկ միւս խողովակով իւրաքանչիւր 5 ժամում ներս է թափւում 32 տակառ 7 վեդրօ 5 շտօֆ։ Քանի՞ ժամում կը լցւի դատարկ աւազանը, եթէ երկու խողովակն էլ միաժամանակ բանան։

636 Հացթուխը գնեց 70 փութ 20 ֆունտ ալիւր. մի շաբաթւայ ընթացքում նա գործածեց բոլոր ալիւրի մի վեցերորդ մասը, իսկ մնացած ալիւրը՝ շաբաթական 5 փութ 35 ֆունտ։ Քանի՞ շաբաթում գործածեց բոլոր ալիւրը։

637 47 արշ. 4 վերշ. քաթանը գնեցին 37 ռուբ. 80 կոպ.։ Որքա՞ն արժէր քաթանի մի արշինը։

638 2 փութ 12 լօտ 1 մսխալ թէյին վճարեցին 231 ռ. 51 կ.։ Որքա՞ն արժէր մի ֆունտ թէյը։

639 57 արշ. 3 վերշ. մահուդին վճարեցին 192 ռ. 15 կոպ.։ Որքա՞ն պէտք է վճարել 75 արշին նոյն տեսակ մահուդին։

640 Ալիւրի փութն արժէ 1 ռ. 60 կ.։ Որքա՞ն ալիւր կարելի է դնել 24 ռ. 52 կ.։

641 5 արշին մահուդն արժէ 16 ռուբ.։ Որքա՞ն մահուդ կարելի գնել 58 ռ. 60 կ.։

---

7. ՁՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ

642 Գնեցին 16 արշին 8 վերշ. մահուդ, արշինը 3 ռուբ. 20 կոպ. և 18 արշին 7 վերշ. մոխմուր, արշինը 9 ռուբլի 60 կոպ.։ Որքա՞նով գնեցին բոլոր մահուդը և մախմուրը։

643 Խանութում կար 2 տակառ սուրճ. առաջին տակառում կար 7 փ. 16 ֆ., իսկ երկրորդում՝ 4 ֆունտ պակաս։ Որքա՞ն արժէր բոլոր սուրճը, եթէ առաջին տակառի սուրճի ֆունտն արժէր 70 կոպ. իսկ երկրորդինը՝ 64 կոպէկ.

644 Դիւղացին 20 դեսեատին վարելահող ունի։ Նա

իւրաքանչիւրում ցանից 1 չո. 3 զարնց ցորեն և ստացաւ 1—7. ստացած բերքի մի հինգերորդականը պահեց, իսկ մնացածը ծախեց չեմվերաը 6 ռուբլի 40 կոպէկով։ Որքա՞նով ծախեց նա մնացած ցորենը։

645 Ջոզենաւը 12 ժամում անցաւ երկու նաւահանգիստների միջի տարածութիւնը առաջին 7 ժամում նա անցաւ 10 վերստ 120 սաժ., իսկ մնացած ամեն մի ժամում՝ 12 վ. 150 սաժ.։ Ո՞րքան էր երկու նաւահանգիստների միջի տարածութիւնը։

646 Հիւանդանոցի համար գնեցին 138 գլուխ շաքար, իւրաքանչիւրը 50 ֆունտ։ Քանի՞ ամսում կը սպառուի բոլոր շաքարը, եթէ շաբաթական գործածեն 34 փութ 20 ֆունտ։

647 Խանութում կար 40 տակառ ձէթ. 15 տակառի իւրաքանչիւրում կար 2 փ 25 ֆ., 12 տակառի իւրաքանչիւրում՝ 3 փ. 17 ֆ., իսկ մնացածի իւրաքանչիւրում՝ 1 փ. 26 ֆ. 16 լօտ։ Ո՞րքան արժէը բոլոր ձէթը, եթէ մի ֆունտն արժէը 32 կոպէկ։

648 Դիւղացին ծախեց 2 սայլ գետնախնձոր. առաջին սայլում կար 8 չո., իսկ երկրորդում՝ 3 չկ. 6 զարնց պակաս։ Ո՞րքանով ծախեց նա բոլոր գետնախնձորը, եթէ մի չեմվերիկը ծախեց 36 կոպէկով։

649 Ձին մի վայրկեանում անցնում է 1 սաժէն 2 ոտնաչ. 8 մատնաչ. տարածութիւն։ Ո՞րքան տարածութիւն կանցնի նա 2 ժամ 36 րոպէ 15 վայրկեանում։

650 Ոսկերիչը շինեց 8 հատ ոսկէ շղթայ և 24 հատ ժամացոյցի բանալի. իւրաքանչիւր շղթային գնաց 4 լօտ 1մսխալ 24 դոլեա ոսկի, իսկ իւրաքանչիւր բանալիին՝ 3 լօտ 1 մսխալ 48 դոլեա պակաս։ Ընդամենը ո՞րքան ոսկի գործածեց նա բոլոր շղթանների և բանալիների համար։

651 Երկու կայարանների միջի տարածութիւնը 2128 վերստ 100 սաժէն է։ Այդ կայարաններից իրար հանդէպ միաժամանակ դուրս եկան երկու գնացք. առաջին գնացքը մի ժամում անցնում էր 45 վ. 157 սաժ., իսկ երկրորդը՝ 5 վ. 250 սաժ. պակաս։ Քանի՞ ժամից յետոյ նրանք իրար կը հանդիպեն։

652 Ջոզենաւը գետի հոսանքով անցաւ երկու քաղաքների միջի տարածութիւնը 25 ժամում, անելով մի ժամում 15 վ. 360 սաժ.։ Քանի՞ ժամում նա կանցնի նոյն ճանապարհը գետի հոսանքի հակառակ ուղղութեամբ, եթէ մի ժամում անցնի 2 վ. 310 սաժ. պակաս։

653 Վաբսկեաը 420 ռուբ. ծախեց 2 դիւժին աքծաթել սեղանի և 3 դիւժին աքծաթէ թէյի դգալներ. իւրաքանչիւր սեղանի դգալի քաշը 7 լօտ 2 մսխալ է, իսկ թէյինը՝ 1 լօտ 2 մսխալ։ Ո՞րքան վաստակեց նա այդ դգալներից, եթէ աքծաթի ֆունտը գնել էր 25 ռուբ. 60 կոպէկով։

654 18 հաւասար թոփ մահուդից կարեցին 160 հատ վերարկու, ամեն մէկը 4 արշ. 8 վերշօկից։ Քանի՞ արշին մահուդ կար իւրաքանչիւր թոփում։

655 Վաճառականը 16 ֆունտ 8 լօտ, ֆունտը 56 կոպէկանոց սուրճը խառնեց 25 ֆունտ 16 լօտ, ֆունտը 48 կոպէկանոց սուրճի հետ. այդ խառնուրդը ծախելուց 5 ռուբ. 38 կոպ. վաստակեց։ Քանիսով ծախեց նա խառնուրդի մի ֆունտը։

656 Կառքի չեմին անիւի շրջապատը 5 արշ. 4 վերշօկ է, իսկ առաջին անիւի շրջապատը՝ 3 արշ. 8 վերշ.։ Քանի՞ պտոյտ կանի չեմին անիւը 11 վերստ 100 սաժէն տարածութեան վրայ։

657 Երկաթուղու գնացքը 8 ժամ 20 րոպէում անցնում է 370 վերստ տարածութիւն։ Քանի՞ վերստ կանցնի նա մի ժամում։

658 1690 ռուբ. 50 կոպէկով գնեցին 7 տակառ 16 վեդրօ 8 շտօֆ օղի։ Ո՞րքանով են ծախելու մի վեդրօ օղին, որպէսզի բոլորից վաստակեն 268 ռուբ. 38 կոպ.

659 Երկու վաճառական իրար հետ ապրանք փոխանակեցին. առաջինը տւեց 45 փութ 15 ֆունտ հաճար, փութը 80 կոպէկով, իսկ երկրորդը՝ 30 փ. 10 ֆ. ցորենի ալիւր։ Ո՞րքան արժէր մի փութ ցորենի ալիւրը։

660 Կառքի յետին անիւի շրջապատը 2 սաժէն 3 մատնաչ. է, իսկ առաջին անիւի շրջապատը՝ 3 ոտնաչ. 9 մատնաչ. պակաս։ Քանի պտոյտ է անելու յետին անիւը այնքան ժամանակում, որքան ժամանակում առաջինը կանի 950 պտոյտը։

661 Վաճառականը գնեց 2290 փութ 20 ֆունտ շաքար. բոլոր շաքարը դարսեց 90 միատեսակ տակառներում. տեղափոխելու ժամանակ 2 տակառ շաքարը անձրևից ղրչւեց և չը ծախւեց. մնացած շաքարի փութը 6 ռ. 80 կ. ծախելուց 360 ռ. 20 կ. վաստակեց։ Ո՞րքանով էր գնել վաճառականը բոլոր շաքարը, եթէ ճանապարհածախս վճարել էր 35 ռուբ. 28 կոպ.։

662 Գինեվաճառն ունէր 7 տակ. 22 վեդ. 4 շտօֆ գինի. այդ գինին նա ածեց փոքր միատեսակ տակառների մէջ, իւրաքանչիւրում 2 վեդ. 7 շտօֆ։ Տակառների մէջ ածելիս թափւեց ամբողջ գինու մի քանուվերորդականը։ Ո՞րքանով ծախեց նա բոլոր գինին, եթէ իւրաքանչիւր փոքր տակառով լի գինին ծախեց 25 ռուբ.։

663 Ոսկերիչն արծաթից շինեց 2 դիւժին սեղանի դգալներ, մի բաժակ և մի մատուցարան. իւրաքանչիւր դգալին գնաց 4 լօտ 1 մսխ. 16 դօլիա արծաթ, բաժակին՝ բոլոր դգալներից 4 անգամ պակաս, իսկ մատուցարանին նրանցից 1 ֆ. 12 լօտ 1 մսխալ պակաս։ Որքան արծաթ ունէր ոսկերիչը։

664 Գիւղացին առաջին շաբաթը կասեց 360 խուրձ ցորեն, երկրորդ շաբաթը՝ 50-ով պակաս, իսկ երրորդ շաբաթը՝ 320-ով առաջին և երկրորդ շաբաթներից պակաս։ Ընդամենը որքան ցորեն նա կասեց, եթէ իւրաքանչիւր 60 խուրձից ստացաւ 6 չ. 3 գարնց ցորեն։

665 Թնդանօթի ձայնը 52 վայրկեանից յետոյ լսւում է 16 վերստ 97 սաժ. 1 ոտնաչ. տարածութեան վրայ։ Որքան ժամանակից յետոյ կը լսւի նրա ձայնը 14 վերստ 474 սաժ. 2 մատնաչ. տարածութեան վրայ։

666 296 ռ. 85 կ. գնեցին 27 չտ. 3 չկ. հաճար և 18 չտ. 4 չկ. վարսակ։ Ո՞րքանով գնեցին վարսակի չետվերինը, եթէ 5 չտ. 2 չկ. հաճարին վճարեցին 39 ռուբ. 90 կոպէկ։

667 Խանութպանը գնեց 72 փ. 23 ֆ. 4 լօտ թէյ. ֆունտը 1 ռ. 60 կ. ծախելուց 963 ռուբ. վաստակեց։ Ո՞րքանով գնեց նա բոլոր թէյը։

668 30 ջալում կար 209 փ. 36 ֆ ալիւր. առաջին 14 ջալի իւրաքանչիւրում կար 7 փ. 18 ֆ.։ Որքան ալիւր կար մնացած իւրաքանչիւր ջալում։

669 506 ռուբլով գնեցին հաւասար քանակութեամբ մահուզ և մախմուր. մահուդի արշինն արժէր 3 ռ. 20 կ., իսկ 9 արշ. մախմուրն այնքան, որքան՝ 16 արշ. 14 վերշ. մահուդը։ Քանի արշին մահուզ և քանի արշին մախմուր գնեցին։

670 Մի ջրհանով 3 ժամ 10 րոպէում հանում են 14 տակ. 10 վեդ. ջուր, իսկ միւսով 5 ժամ 12 րոպէում 15 տակ. 24 վեդ. ջուր։ Որքան ժամանակում երկու ջրհանով միասին կը հանեն աւազանից 77 տակառ ջուր։

671 Մի ֆունտ ալիւրից դուրս է գալիս 1 ֆունտ 36 մսխ. հաց։ Ո՞րքան հաց դուրս կը գայ 9 չտ. ցորենից, եթէ մի չետվերտից ստացւում է 7 փ. 24 ֆ.։

672 Գրնձագործն ունէր 8 կտոր պղինձ, ամեն մի կտորը 5 ֆունտ 6 լօտ 2 մսխալ էր և էլի 10 կտոր, ամեն մէկը՝ 9 ֆ. 1 լօտ 1 մսխալ. այդ բոլոր պղնձից նա շինեց մի բանի թաւա, իւրաքանչիւրը 6 ֆունտ 19 լօտ 1 մսխալից: Քանի՞ թաւա նա շինեց:

673 Երկու ակում կար 7 փ. 16 ֆ. իւղ. երբ որ առաջին ակից վերցրին 13 ֆ. 12 լ., իսկ երկրորդից 1 ֆ. 14 լ. այն ժամանակ երկուսի մէջ մնաց հաւասար քանակութեամբ իւղ: Ո՞րքան իւղ կար իւրաքանչիւր ակում:

674 Քանի օր կը բաւականանայ 774 փութ 12 ֆ. խոտը 15 ձի և 46 կով կերակրելու համար, եթէ իւրաքանչիւր ձիուն օրական տան 8 ֆունտ, իսկ կովին՝ 9 ֆ.:

675 Վաճառականն ունէր 787 փութ 20 ֆունտ շաքար. մէկին նա ծախեց բոլոր շաքարի 2 տասնուհինգերորդականը, իսկ միւսին՝ 7 երեսուներորդականը: Որքա՞ն շաքար մնաց նրա մօտ:

676 Ջիլը կերակրելու համար 3 ամսում գործածեցին 511 չտ. 4 չկ. վարսակ. առաջին ամսում գործածեցին 5 տասնուերկուերորդականը, իսկ երկրորդ ամսում՝ մըւնացորդի 9 տասնուչորորդականը: Որքա՞ն վարսակ գործածեցին երրորդ ամսում:

677 Ճանապարհորդն անցաւ 3156 վերստ 300 սաժէն տարածութիւն. ամբողջ ճանապարհի տասնուհինգերորդականը անցաւ ձիով, վեցերորդ մասը՝ շոգենաւով, իսկ մնացած ճանապարհը՝ երկաթուղիով: Որքա՞ն տարածութիւն անցաւ նա երկաթուղիով:

678 Մեքենան իւրաքանչիւր 9 րոպէ 46 վայրկեանում շինում է 334 սաժ. 6 ոտնաչ. երկարութեան երկաթէ լար: Ի՞նչ երկարութեան լար կը շինէ նոյն մեքենան 1 ժամ 15 րոպէ 13 վայրկեանում:

679 Կալածատէրը կասած ցորենն ածեց 3 ամբարում. առաջին ամբարում ածեց 18 չտ. 7 չկ., երկրորդում՝ 5 անգամ աւելի, իսկ երրորդում՝ 4 անգամ առաջին և երկրորդից աւելի: Ընդամենը որքա՞ն ցորեն նա ածեց 3 ամբարում:

680 Կապալառուն պայմանաւորուեց տեղափոխել 1450 փութ 32 ֆունտ շաքարը գործարանից երկաթուղու կայարան. սկզբից նա ուղարկեց 24 սայլ, իւրաքանչիւրը 35 փութ շաքար բարձած, իսկ մնացած շաքարը բարձեց հաւասար 16 սայլի վրայ: Քանի՞ փութ շաքար բարձեց 16 սայլի իւրաքանչիւրի վրայ:

681 36 արկղում կար 144 փ. 22 ֆ. թէյ. 11 արկղի իւրաքանչիւրում կար 5 փ. 24 ֆ. 16 լ.: Ո՞րքան թէյ կար մնացած արկղների իւրաքանչիւրում, եթէ բոլոր արկղների միջի թէյը հաւասար էր:

682 Երեք հոգի միասին գնեցին 17 ֆունտ 16 լօտ թէյ: Ո՞րքան թէյ է ստանալու իւրաքանչիւրը, եթէ առաջինը վճարել է 8 ռուբ. 80 կոպ. երկրորդը՝ 6 ռ. 80 կ., իսկ երրորդը՝ 12 ռ. 40 կ.:

683 Գործարանում կար 1861 փ. 11 ֆ. պղինձ. սըրանից ձուլեցին 8 հատ զանգ, իւրաքանչիւրը 216 փ. 37 ֆունտից և 38 հատ միատեսակ կաթսաներ: Ո՞րքան պղինձ գնաց իւրաքանչիւր կաթսային:

684 25 ֆունտ 8 լօտ, ֆունտը 2 ռուբլիանոց թէյը խառնեցին 36 ֆունտ 16 լօտ, ֆունտը 1 ռուբ. 40 կոպէկանոց թէյի հետ: Որքա՞նով պէտք է ծախեն խառնուրդի մի ֆունտը, որպէսզի 36 ռուբ. 72 կոպ. վաստակեն:

685 4 ֆ. ալիւրից դուրս է գալիս 5 ֆ. հաց: Որքա՞ն ալիւր է հարկաւոր 500 մարդ կերակրելու համար 2 շաբ. 6 օրում, եթէ ամեն մէկին օրական տան 2 ֆ. 8 լ. հաց:

686 Մի բանւորը 6 օրում կասում է 4 չտ. 2 զարնց գարի, միւս բանւորը 3 օրում կասում է 2 չտ. 2 չկ.

3 գարնց։ Քանի՞ օրում 2 բանուորը միասին կը կատեն 17 չ. 2 չկ. գարին։

687 Պղնձագործն ունէր 18 հատ թաւա, իւրաքանչիւրը 8 ֆ. 8 լ. և 12 հատ կաթսայ, իւրաքանչիւրը 25 ֆ. 15 լ. պղնձից։ Որքա՞նով ծախեց նա բոլոր ամանները, եթէ բոլոր կաթսաներից 100 ռ. 56 կ. աւել ստացաւ։

688 Խանութի բերին 5 չուալ ալիւր. իւրաքանչիւրը 4 փութ 12 ֆունտ և 7 չուալ, իւրաքանչիւրը 3 փութ 16 ֆունտ։ Որքա՞ն վճարեցին բոլոր ալիւրին, եթէ 7 չուալը 2 ռ. 76 կ. աւել արժէր 5 չուալ ալիւրից։

689 Գնեցին 15 փոփ մահուդ, իւրաքանչիւրը 70 արշինից. այդ մահուդից վերարկուներ կարեցին։ Քանի՞ վերարկու դուրս եկաւ բոլոր մահուդից, եթէ իւրաքանչիւրին գնաց 4 արշ. 6 վերշ.։

690 95 տակառ 7 վեդ. պարունակող ջրամբարից հանելու են նրա մէջ գտնուող ջուրը 2 ջրհանով. առաջին ջրհանը ամեն մի 3 ժ. 40 րոպէում դուրս է թափւում 25 տակ. 12 վեդ. ջուր, իսկ երկրորդը ամեն մի 4 ժամ 12 րոպ.՝ 22 տակ. 2 վեդ.։ Որքա՞ն ժամանակում այդ երկու ջրհանը միաժամանակ դուրս կը թափեն բոլոր ջուրը։

691 Երկու կայարանից միաժամանակ իրար հանդէպ դուրս եկան 2 գնացք. առաջին գնացքը ամեն մի 4 ժամ 15 րոպէում անցնում էր 153 վերստ. իսկ երկրորդը՝ ամեն մի 3 ժամ 25 րոպէում անցնում էր 164 վերստ։ Այդ գնացքները 12 ժամ 30 րոպէից իրար հանդիպեցան։ Որո՞շել երկու կայարանների միջի տարածութիւնը։

692 Առաջին բանուորը իր տիրոջ մօտ ծառայէց 5 տարի 3 ամիս, երկրորդը՝ 3 տարի 8 ամիս, իսկ երրորդը՝ 7 տ. 9 ամիս։ Որքա՞ն փող է ստանալու իւրաքանչիւրը, եթէ մի բանուորը տարեկան ստանում էր 81 ռուբլի։

693 65 ամէն երկարութիւն ունեցող պարանից կտրեցին 4 սաժ. 2 ոտնաչ., 3 մատնաչ., իսկ մնացածով կապեցին 3 արկղ։ Որքա՞ն պարան գնաց իւրաքանչիւր արկղին։

694 Երկու կայարանի միջի տարածութիւնը 906 վերստ է. այդ կայարաններից միաժամանակ իրար հանդէպ դուրս եկան երկու գնացք։ Առաջինը մի ժամում անցնում էր 40 վերստ 460 սաժ.։ Քանի՞ վերստ էր անցնում մի ժամում երկրորդ գնացքը, եթէ կայարանից դուրս գալուց յետոյ նրանք իրար հանդիպեցան 12 ժամ 30 րոպէ անցած։

695 Կալաածատէրն ունէր 510 «մէրինոս» ոչխար և 720 հատ հասարակ տեսակից. իւրաքանչիւր «մէրինոս» ոչխարից նա ստացաւ 3 ֆունտ 12 լօտ 2 մսխալ բուրդ, իսկ իւրաքանչիւր հասարակից՝ 18 լօտ 1 մսխալ աւելի։ «Մէրինոս» ոչխարի բրդի ֆունտը ծախեց 64 կոպէկով, իսկ հասարակի ֆունտը՝ 40 կոպէկով։ Որքա՞նով ծախեց նա բոլոր բուրդը։

696 Տպարանում գործածեցին 1365 օգմայ 19 դաստա 14 թերթ թուղթ. առաջին 3 ամսում գործածեցին 112 օգմա 16 դաստա 20 թերթ, իսկ մնացած թուղթը՝ ամսական 146 օգմա 15 դաստա 14 թերթ։ Քանի՞ ամսում գործածեցին մնացած թուղթը։

697 Երկու վարպետ պատրիեցին գործել 131 արշ. 4 վերշ. ժանեակ. առաջինը 12 օրում գործեց 29 արշ. 4 վերշ., իսկ երկրորդը 9 օրում՝ 20 արշ. 4 վերշ.։ Քանի՞ օրում նրանք կը գործեն բոլոր ժանեակը, եթէ միասին աշխատեն։

698 Վաճառականը 756 ռուբ. 96 կոպէկով գնեց ցորենի և գարու ալիւր. ցորենի ալիւրը 3 անգամ աւելի արժէր։ Որքա՞ն ալիւր գնեց նա իւրաքանչիւր տեսակից, եթէ գարու ալիւրի փութն արժէր 60 կոպ., իսկ ցորենինը՝ 1 ռուբլի 60 կոպէկ։

699 164 փութի ձոյլը կազմած է պղնձից, կլայեկից և արճճից. պղինձը 84 փ. 37 ֆ. էր, կլայեկը՝ 12 անգամ պակաս, իսկ մնացածը՝ արճիճ: Որքան կլայեկ կար ձոյլում:

700 Երեք վարպետ միասին ստացան 66 ռ. 25 կ.: Որքան փող է ստանալու իւրաքանչիւրը, եթէ առաջինը բանել է 18 օր, երկրորդ՝ 15 օր, իսկ երրորդը՝ 20 օր:

701 Երեք միատեսակ մեքենան շինեցին 69869 սաժէն լար: Որքան լար շինեց իւրաքանչիւր մեքենան, եթէ առաջինը բանում էր 7 օր, երկրորդը՝ 8 օր, օրական 9 ժամ իսկ երրորդը՝ 9 օր, օրական 10 ժամ:

702 Կալւածատէրը 75 դեսեատին հող էր վարել: 25 դեսեատինի իւրաքանչիւրից նա ժողովեց 9 չտ. 3 չկ. 2 գարնց ցորեն, 36 դեսեատինի իւրաքանչիւրից՝ 7 չտ. 7 չկ. 3 գարնց, իսկ մնացածի իւրաքանչիւրից՝ 8 չտ. 7 գարնց: Ընդամենը որքան ցորեն նա ժողովեց:

703 Երեք տեսակ հաճարից խառնուրդ կազմեցին. առաջին տեսակից վերցրին 70 չտ. 2 չկ., երկրորդ տեսակից՝ 63 չտ. 6 չկ., իսկ երրորդ տեսակից՝ 86 չտ. 5 չկ.: Որքան էր բոլոր հաճարի քաշը, եթէ առաջին տեսակի մի չետվերտը 9 փութ է, երկրորդինը՝ 8 փ. 32 ֆ. և երրորդինը՝ 8 փ. 24 ֆ.:

704 72 բանուոր կերակրելու համար գնեցին 24 տոպրակ ալիւր, իւրաքանչիւրը 2 փ. 36 ֆ.: 2 շաբ. 4 օրւայ ընթացքում ամեն մի բանուորի համար գործածեցին օրական 1 ֆ. 1 լօտ ալիւր: Որքան ալիւր մնաց:

705 215 փ. ձոյլը կազմած է պղնձից, կլայեկից և արճճից. պղնձի իւրաքանչիւր 14 մասի հետ խառնուած է 15 մաս կլայեկ և 35 մաս արճիճ: Որքան պղինձ, կլայեկ և արճիճ կայ այդ ձոյլում:

706 Երկու վաճառականի իրար հետ ապրանք փոխանակեցին. առաջինը տւեց 81 փ. 8 լօտ թէյ, ֆունտը 2 ռ. 20 կ., իսկ երկրորդը՝ 13 փ. 35 ֆ. շաքար, փութը 6 ռ. 40 կ.: Ո՛ր վաճառականը և որքան փող է տալու միւսին իր ապրանքի պակասը լրացնելու համար:

707 1829 ռ. 45 կոպ. գնեցին 9 միատեսակ թոփ մահուդ և 7 արշին 12 վերշօկանոց մահուդի մի կտոր: Քանի՛ արշին մահուդ կար իւրաքանչիւր թոփում, եթէ մահուդի արշինն արժէ 5 ռ. 60 կոպ.:

708 Ոմն մի բոպէում անցնում է 42 սաժ. 6 ոտնաչափ տարածութիւն: Որքան ժամանակում նա կանցնի 3600 քայլ տարածութիւնը, եթէ նրա 15 քայլը հաւասար է 6 սաժ. 3 ոտնաչ.:

709 Երեք խումբ բանուորները, որոնց առաջինում կար 15 հոգի, երկրորդում՝ 17 և երրորդում՝ 23 հոգի, 8 օրում փորեցին 2 վերստ 26 սաժ. 2 արշ. երկարութիւն ունեցող մի արխ: Ի՞նչ երկարութեան արխ կը փորեն 6 օրում 2 խումբ բանուորները, որոնց առաջինը՝ 19 հոգուց, իսկ երկրորդը 27 հոգուց բաղկացած լինի և եթէ երկու խումբն էլ միատեսակ աշխատեն:

710 Վաճառականը արշինը 3 ռուբ. 40 կոպ. մահուդ գնեց: 116 արշ. մահուդը նա ջիչից իր ընկերոջ և նոյն գնով ծախեց, իսկ մնացած մահուդի արշինը ծախեց 4 ռուբ. 12 կոպ. բոլոր մահուդից նա վաստակեց 403 ռ. 20 կ.: Որքանով էր գնել նա բոլոր մահուդը:

711 Խանութպանը 13 փութ 20 ֆ. թէյը փոխեց մահուդի հետ ամեն մի արշին մահուդին նա տւեց 2 ֆ. 26 լօտ թէյ Որքան արժէր բոլոր թէյը, եթէ մահուդի արշինն արժէր 2 ռուբ. 55 կոպ.:

712 Դերձակը 975 ռուբ. 20 կոպ մահուդ գնեց, արշինը 6 ռուբ. 40 կոպ.: Այդ մահուդից նա կարեց 18

վերարկու, իւրաքանչիւրը 5 արշին 1 վերշ. և մի քանի բաճկոն, իւրաքանչիւրը 4 արշ. 6 վերշ.: Քանի բաճկոն նա կարեց:

713 Վաճառականը 297 ռուբ. 50 կոպ. գնեց 4 փ. 15 ֆ. թէյ. սրա մի մասը նա ծախեց առանց վնասի և վաստակի, իսկ մնացածի փունտը 2 ռուբ. ծախելուց 49 ռուբ. 50 կոպ. վաստակեց: Որքա՞ն թէյ նա ծախեց առանց վնասի և վաստակի:

714 Նաւթով լի տակառի ծանրութիւնը 42 փութ 17 ֆունտ էր. այդ նաւթը 46 ռուբ. 95 կոպ. ծախելուց 15 ռուբ 65 կոպ. վաստակեցին: Որքա՞ն արժէր նաւթի փունտը, եթէ դատարկ տակառը 3 փ. 12 ֆունտ էր:

715 Վաճառականը 16 փ. 35 ֆունտ առաջին տեսակ ալիւրը, որի փութը արժէր 2 ռուբ. 40 կոպ. խառնեց 28 փ. 14 ֆունտ երկրորդ տեսակ ալիւրի հետ. այդ խառնուրդից 8 փ. 14 ֆունտ ալիւրը փչացաւ և չծախուեց, իսկ մնացածի փութը 2 ռուբ. ծախելուց վաճառականը 12 ռ. 11 կ. վնաս կրեց: Որքա՞ն արժէր երկրորդ տեսակ ալիւրի փութը:

716 Գիւղից մինչև քաղաք 29 վերստ 180 սաժ. էր. գիւղացին 4 ժամ 25 րոպէում անցաւ 21 վերստ 100 սաժ. տարածութիւն. ճանապարհին 1 ժամ 30 րոպ. հանգստացաւ և նրանից յետոյ ամեն մի ժամում 360 սաժէն պակաս անցաւ: Քանի՞ ժամում գիւղացին քաղաք հասաւ:

717 Դինեվաճառն ունէր 8 վեդ. 4 շտ. մի տեսակ գինի, որի վեդրոն արժէր 6 ռուբ այդ գինու հետ խառնեց 2 վեդ. 3 շտ. ուրիշ տեսակ գինի, որի շօֆին արժէր 1 ռուբ. 80 կոպ.: Որքա՞նով նա ծախելու է խառնուրդի շիշը, որպէսզի 15 ռուբ. 20 կոպ. վաստակի (շօֆը ունի 2 շիշ):

718 15 փ. 30 ֆ. պղնձից վարպետը շինեց ինքնաեռներ և թասեր. իւրաքանչիւր ինքնաեռի համար ծախսեց 12 ֆ. 8 լօտ պղինձ, իսկ իւրաքանչիւր թասի համար՝ 8 ֆ. 24 լօտ պակաս: Քանի՞ ինքնաեռ և քանի՞ թաս նա շինեց, եթէ երկուսն էլ հաւասար թւով դուրս եկան:

719 Ոսկերիչը 1 ֆունտ 13 լօտ 1 մսխալ ոսկուց պատրաստեց 8 հատ միատեսակ շղթայ և 24 բանալի. ամեն մի բանալին 5 անգամ թեթև էր մի շղթայից: Որքա՞ն ոսկի գնաց իւրաքանչիւր շղթային և իւրաքանչիւր բանալիին:

720 Երկու ոսկերիչ միասին գնեցին 6 ֆունտ 3 լօտ 1 մսխ. ոսկի: Որքա՞ն ոսկի է ստանալու իւրաքանչիւրը, եթէ առաջինը վճարեց 739 ռուբ. 80 կոպ., իսկ երկրորդը՝ 2424 ռ. 60 կ.:

721 Երկու տակառում կար միատեսակ սուրճ. առաջինում կար 6 փութ 30 ֆ. 16 լօտ և արժէր 173 ռ. 12 կոպ. երկրորդ տակառի սուրճն արժէր 42 ռ. 22 կ. պակաս: Որքանով են ծախելու սուրճի մի ֆունտը, որպէսզի բոլորից վաստակեն 152 ռ. 1 կոպ.:

722 Երեք մառանում կար 150 տակառ 30 վեդրօ 6 շօֆ գինի. երկրորդ մառանում գինին 4 տակառ 15 վեդրօ 5 շօֆով պակաս էր առաջին մառանի գինուց և 3 տակառ 24 վեդրօ 6 շօֆով աւելի էր երկրորդի գինուց: Որքա՞ն գինի կար իւրաքանչիւր մառանում:

723 Երեք թոփում կար 100 արշ. 8 վերշ. մահուդ: Առաջին թոփում կար 3 անգամ աւելի մահուդ, քան թէ մնացած երկուսի մէջ, իսկ երկրորդում 7 արշ. 10 վերշ. երրորդից պակաս: Որքա՞ն մահուդ կար իւրաքանչիւր թոփում:

724 Բանուորները կերակրելու համար հաց գնեցին, որը 64 օրում կը սպառուէր, եթէ իւրաքանչիւր բանուորին

տային օրական 2 ֆ. 16 լօտ։ Քանի՛ օր կը բաւականանայ այդ հացը նոյն բանուորներին, եթէ իւրաքանչիւրը օրական ստանայ 2 ֆ. 21 լօտ 1 մսխ.։

725 Ալափն իւր ունեցած ցորենը աղաց և ամեն մի փութիկ ստացաւ 28 ֆ. 4 լօտ ալիւր, որի փութը 1 ռ. 80 կ. ծախելուց նա 162 ռուբ. վաստակեց։ Ո՛րքանով էր նա գնել ցորենի փութը, եթէ բոլոր ալիւրից վաստակեց 18 ռուբ. 64 կոպ.։

726 32 բանուորը 6 օրում մի նաւից հանեցին 28492 փութ 32 ֆ. ցորեն։ Ո՛րքան ցորեն կը հանեն 4 օրում 15 բանուորը։

727 Մեքենան 8 օրում, բանելով օրական 10 ժամ 12 րոպէ, մաքրեց 76 փութ 20 ֆունտ ոչխարի բուրդ։ Քանի՛ օրում նոյն մեքենան կը մաքրէ 56 փ. 35 ֆունտ բուրդը, եթէ օրական բանի 12 ժամ 8 րոպէ։

728 Կալւածատէրը ծախեց՝ 76 փ. 10 ֆ. ցորեն, փութը 1 ռ. 20 կոպ., 148 փութ 12 ֆ. հաճար, փութը 80 կոպ. և մի քանի փութ վարսակ, փութը 62 կոպ. բոլորից նա ստացաւ 268 ռ. 73 կ.։ Ո՛րքան վարսակ նա ծախեց։

729 2 փ. 10 ֆ. առաջին տեսակ թէյը խառնեցին 3 փ. 5 ֆ. երկրորդ տեսակ թէյի հետ։ 4 փ. 15 ֆ. առաջին տեսակ թէյն արժէր 420 ռուբ., իսկ 5 ֆունտ երկրորդ տեսակին արժէրը այնքան, որքան՝ 7 ֆունտ առաջին տեսակ թէյը։ Որքա՞ն արժէր ամբողջ խառնուրդը։

730 4 ջալ ալիւրի և 7 ջալ բրնձի քաշը 51 փութ 39 ֆունտ էր, իսկ 9 ջալ նոյն տեսակ ալիւրը և 7 ջալ բրնձի քաշը 79 փութ 4 ֆունտ էր։ Որքա՞ն էր 1 ջալ բրնձի քաշը։

731 Մի գնողին ծախեցին 9 ֆունտ 18 լօտ սուրճ, իսկ միւսին՝ 4 ֆունտ 30 լօտ. երկրորդ գնողը վճարեց

2 ռուբ. 96 կոպ. առաջինից պակաս։ Որքա՞ն վճարեց իւրաքանչիւր գնողը։

732 Երեք ջրամբարում մտնում է 301 տակ. 38 վեդ. ջուր։ Ո՛րքան ջուր է մտնում իւրաքանչիւրում, եթէ երկրորդում տեղաւորւում է 5 անգամ առաջին ջրամբարից աւելի և 6 անգամ երրորդից պակաս։

733 Կապալառուն յանձն առաւ սալայատակել 2 վերստ 107 սաժ. երկարութիւն ունեցող մի փողոց։ Ընկերից նա 35 վարպետ վարձեց, 15 օրից յետոյ մի քանի վարպետ աւելացրեց. ամբողջ փողոցը սալայատակեցին 29 օրում։ Քանի՛ վարպետ նա վերջը աւելացրեց, եթէ իւրաքանչիւր վարպետն օրական սալայատակում էր 1 սաժ. 2 ոտնաչ. տարածութիւն։

734 Գործարանին պատւիրել էին 2050 արշ. չիթ. այդ պատւէրը կատարելու էին 15 ջուլհակ, որոնցից իւրաքանչիւրն օրական 10 արշ. 4 վերշ. չիթ էր գործելու։ 6 օրից յետոյ 7 ջուլհ. աւելացրին, որոնք նոյնչափ էին աշխատում։ Քանի՛ օրում նրանք պատրաստեցին պատւիրած չիթը։

735 Մի քանի տակառում լցրին 63 ֆ. 27 ֆունտ սուրճ, փութը 24 ռուբ.. եթէ իւրաքանչիւր տակառում աւելացնէին 15 ֆունտ 16 լօտ, այն ժամանակ բոլոր տակառներում 68 փութ 13 ֆունտ սուրճ կունենան։ Ո՛րքան արժէր իւրաքանչիւր տակառի սուրճը։

736 Հագուստեղէն ծախողը դերձակին պատւիրեց մի քանի վերարկու. այդ վերարկուները 2240 ռ. ծախելուց հագուստեղէն ծախողը 229 ռուբ. 60 կոպ. վաստակեց։ Քանի՛ վերարկու նա պատւիրեց դերձակին, եթէ մի վերարկւի մահուդն արժէր 26 ռուբ. 20 կոպ., իսկ կարելավարձը՝ 9 ռուբ. 70 կոպ.։

737 Վաճառականը 32 ռուբ. 64 կոպ. ընկոյզ գնեց, ֆունտը 12 կոպ.։ 6 արկղ ընկոյզը, որի իւրաքանչիւրում

կար 25 ֆունտ 8 լօտ, նա ծախեց ֆունտը 18 կոպ., իսկ մնացածի ֆունտը մի քիչ էժան ծախեց։ Ո՞րքանով ծախեց նա մնացած ընկոյզի ֆունտը, եթէ բոլորից վաստակեց 13 ռուբ. 91 կոպ.։

738 Դերձակն ունէր 1864 արշ. 8 վերշ. շալ։ Սրանից նա կարելու էր 308 արխալուխ, իւրաքանչիւրը 3 արշ. 2 վերշօկից, իսկ մնացածից կարելու էր մի քանի չուխայ, իւրաքանչիւրը 5 արշին 8 վերշօկից. ամեն մի արխալուխի կարելավարձ նա ստանալու էր 4 ռուբ. 50 կոպ. իսկ ամեն մի չուխայի՝ 2 անգամ աւելի։ Ընդամենը ո՞րքան կարելավարձ ստացաւ նա։

739 255 ռուբ. 20 կոպ. գնեցին 48 արշ. 8 վերշ. մահուդ և 156 արշ. 4 վերշ. շալ։ Ո՞րքանով գնեցին բոլոր մահուդը, եթէ մահուդի արշինն արժէ 5 անգամ շալից թանգ։

---

8. ԺԱՄԱՆԱԿ ՀԱՇԻՒԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

740 Որքա՞ն ժամանակ է անցել օրւայ սկզբից մինչև՝ ա) առաւօտեան 8 ժամ 11 րոպէն. բ) գիշերւայ 7 ժամը. գ) գիշերւայ 9 ժ. 16 րոպ. դ) գիշերւայ 7 ժ. 48 ր. 35 վայրկ.։

741 Քանի՞երորդ ժամն է մանուկ, եթէ օրւայ ընկզրից անցել է՝ ա) 6 ժամ. բ) 14 ժամ. գ) 18 ժամ 40 րոպէ։

742 Որքա՞ն ժամանակ է անցել մարտի սկզբից մինչև՝ ա) մարտի 13-ը. բ) մարտի 25-ը։

743 Քանի՞ ամիս և օր է անցել տարւայ սկզբից մինչև՝ ա) մարտի 16-ը. բ) սեպտեմբերի 10-ը. գ) դեկտեմբերի 30-ը։

744 Քանի՞ օր է անցել հասարակ տարւայ սկզբից մինչև՝ ա) ապրիլի 11-ը. բ) սեպտեմբերի 28-ը. գ) նոյեմբերի 30-ը։

745 Քանի՞ օր է անցել նահանջ տարւայ սկզբից մինչև՝ ա) ապրիլի 11-ը. բ) մայիսի 13-ը. գ) սեպտեմբերի 25-ը։

746 Քանի՞ տարի, ամիս և օր է անցել Քրիստոսի ծնունդից մինչև՝ ա) 1878 թւի ապրիլի 25-ը. բ) 1854 թւի օգոստոսի 30-ը. գ) 1898 թւի նոյեմբերի 16-ը։

747 Քանի՞ տարի, ամիս և օր է անցել Քրիստոսի ծնունդից մինչև՝ ա) 1895 թւի մարտի 17-ը. բ) 1896 թւի մարտի 17-ը. գ) 1871 թւի ապրիլի 25-ը. դ) 1892 թւի ապրիլի 25-ը։

748 Քանի՞ տարի, ամիս, օր և ժամ է անցել Քրիստոսի ծնունդից մինչև՝ ա) 1875 թւի մարտի 5-ի ցերեկւայ ժամի 5-ը. բ) 1876 թւի սեպտեմբերի 17-ի գիշերւայ ժամի 8-ը։

749 Քանի՞ տարի, օր և ժամ է անցել Քրիստոսի ծնունդից մինչև՝ ա) 1893 թւի մարտի 17-ի առաւօտեան ժամի 5-ը. բ) 1896 թւի մարտի 17-ի երեկոյեան ժամի 9-ը։

750 Ո՞ր օրը, ամիսը և տարին կը լինի, եթէ Քրիստոսի ծնունդից անցել է՝ ա) 1873 տարի, 4 ամիս, 7 օր. բ) 1893 տարի, 10 ամիս, 12 օր. գ) 1896 տարի, 48 օր. դ) 1895 տարի, 248 օր։

751 Ո՞ր ժամը. օրը, ամիսը և տարին կը լինի, եթէ Քրիստոսի ծնունդից անցել է՝ ա) 1873 տարի, 10 ամիս, 15 օր, 4 ժամ. բ) 1896 տարի, 8 ամիս, 17 օր, 14 ժամ. գ) 1893 տարի, 156 օր, 9 ժամ. դ) 1895 տարի 143 օր, 17 ժամ։

---

752 Մեքենան սկսեց բանել առաւօտեան 6 ժամ 46 րոպէին, իսկ կանգնեց երեկոյեան 5 ժամ 49 րոպէին։ Որքա՞ն ժամանակ բանեց մեքենան։

753 Շոգենաւը դուրս եկաւ նաւահանգստից մարտի 3-ին երեկոյեան ժամի 5-ին և վերադարձաւ նոյն տարւայ սեպտեմբերի 30-ին առաւօտեան ժամի 7-ին։ Որքա՞ն ժամանակ շոգենաւը ճանապարհորդեց։

754 Հայոց վերջին թագաւոր Լևոն Զ-ն վախճանուեց Փարիզում 1393 թուի նոյեմբերի 29-ին։ Որքա՞ն ժամանակ է անցել նրա մահուան օրից։

755 Թիֆլիզ քաղաքն աւերուեցաւ Ագա-Մահմէդ-Խանի ձեռքով 1795 թուի սեպտեմբերի 12-ին։ Ո՞րքան ժամանակ է անցել այդ օրից։

756 1801 թ. յունուարի 18-ին Վրաստանը միանում է Ռուսաստանի հետ։ Որքա՞ն ժամանակ է անցել այդ օրից։

757 1878 թ. փետրուարի 19-ին տոորագրուեցաւ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը Հայաստանի բարենորոգումների մասին։ Ո՞րքան ժամանակ է անցել այդ օրից։

758 1837 թ. հոկտեմբերի 31-ին Գիւմրի քաղաքն անցաւ ռուսաց ձեռքը և անուանուեցաւ Ալէքսանդրապօլ։ Որքա՞ն ժամանակ է անցել այդ օրից։

759 1478 թ. փետրուարի 14-ին մեռնում է տպագրութեան հնարող Գուտտենբէրգը։ Որքա՞ն ժամանակ է անցել այն օրից։

760 1821 թուին նոյեմբերի 21-ին Թիֆլիզում հիմնուեցաւ Ներսիսեան ազգային դպրոցը։ Որքա՞ն ժամանակ է անցել այդ օրից։

761 Մի մարդ 1875 թուին մարտի 25-ին երեկոյեան 7 ժամ 30 րոպէին ճանապարհ ընկաւ և 1878 թուին նոյեմբերի 28-ին առաւօտեան 3 ժամ 25 րոպէին տուն վերադարձաւ։ Որքա՞ն ժամանակ նա ճանապարհորդեց։

---

762 Գիւղացին տնից դուրս եկաւ առաւօտեան 3 ժամ 25 րոպէին և 13 ժամ 17 րոպէից յետոյ հասաւ քաղաք։ Ե՞րբ նա քաղաք հասաւ։

763 Տան շինութիւնը սկսեցին մարտի 22-ին և 5 ամիս 17 օրում վերջացրին։ Ե՞րբ վերջացրին տան շինութիւնը։

764 Միքայէլ Նալբանդեանը ծնուեց 1829 թ. նոյեմբերի 2-ին և ապրեց 36 տարի 4 ամիս։ Ե՞րբ նա վախճանուեց։

765 Բանաձէը և թատերագիր Պետրոս Դուրեանը ծնուեց 1851 թ. մայիսի 20-ին և ապրեց 20 տարի 8 ամիս 1 օր։ Ե՞րբ նա վախճանուեց։

766 Ներսէս Ե. կաթուղիկոսը ծնուեց 1771 թ. օգոստոսի 13-ին և ապրեց 85 տարի 6 ամիս։ Ե՞րբ նա վախճանուեց։

767 1897 թ. ապրիլի 5-ին մի մարդ բանկից փող վերցրեց 3 տարի 156 օր ժամանակով։ Ե՞րբ նա վերադարձրեց այդ փողերը։

768 Վիլհաան Ֆերենցը (Ցովսէփ Զիշմանեան) ծնուեց 1822 թ. սեպտեմբերի 12-ին և ապրեց 65 տարի, 5 ամիս 5 օր։ Ե՞րբ նա վախճանուեց։

769 Շոգենաւը դուրս եկաւ նաւահանգստից 1886 թ. ապրիլի 25-ին առաւօտեան 7 ժամ 30 րոպէին և 4 տարի 7 ամիս 23 օր 5 ժամ 40 րոպէից հասաւ նշանակած տեղը։ Ե՞րբ նա տեղ հասաւ։

770 Մոսկւայում կէս օրը լինում է Պետերբուրգից 25 րոպէ 4 վայրկեան առաջ։ Ո՞ր ժամն է Մոսկւայում, երբ Պետերբուրգում ճիշտ 11 ժամ 37 րոպէ 16 վայրկեանն է։

---

771 Բանաղը վերջացրեց իր գործը երեկոյեան 6 ժամ։ 35 րոպ.։ Ե՞րբ վերջացրեց գործը, եթէ նա բանեց 9 ժ. 38 ր.

772 Մի մարդ 3 օր 16 ժամ 46 րոպէում Բազէից Երևան հասաւ։ Ե՞րբ նա Բազէից դուրս եկաւ, եթէ մայիսի 30-ին առաւօտեան 7 ժամ 15 րոպէին հասաւ Երևան։

773 Դամառ-Քաթիպան (Ռափայէլ Պատկանեան) ծնուեց 1829 թ. օգոստոսի 22-ին։ Ե՞րբ նա մեռաւ, եթէ 61 տարի 9 ամիս 14 օր ապրեց։

774 Բանաստեղծ և պատմագէտ Հ. Ղևոնդ Ալիշանը ծնուեց 1901 թ. նոյեմբերի 9-ին։ Ե՞րբ նա մեռաւ, եթէ 81 տարի 4 ամիս 3 օր ապրեց։

775 Լեզուագէտ և պատմագէտ Գաբրիէլ արքիեպիսկոպոս Այվազեանը ծնուեց 1880 թ. ապրիլի 8-ին։ Ե՞րբ նա մեռաւ, եթէ 67 տարի 10 ամիս 28 օր ապրեց։

776 Խրիմեան Հայրիկը կաթուղիկոս է օծուել 1893 թ. սեպտեմբերի 26-ին։ Ե՞րբ է նա ծնուել, եթէ նրա ծննդեան օրից մինչև օծուելը 72 տարի 5 ամիս 22 օր է անցել։

777 Մի մարդ մեռաւ 1899 թ. մայիսի 25-ին ցերեկուայ 3 ժամ 43 րոպէին։ Ե՞րբ նա ծնուեց, եթէ 47 տարի 289 օր 19 ժամ 35 րոպէ ապրեց։

778 Օդէսայում յունիսի 11-ին արևը ծագում է առաւօտեան 4 ժամ 7 րոպէին, մայր է մտնում երեկոյեան 7 ժամ 56 րոպէին, իսկ նոյն օրը Արխանգէլսկ քաղաքում արևը ծագում է ցերեկուայ 1 ժամ 18 րոպէին և մայր է մտնում 10 ժամ 46 րոպէին։ Որքա՞ն ժամանակով յունիսի 11-ին ցերեկը Արխանգէլսկում աւելի երկար է, քան թէ Օդէսայում։

779 Դեկտեմբերի 1-ին Թիֆլիսում արևը ծագում է 7 ժամ 18 րոպէին, իսկ մայր է մտնում 4 ժամ 30 րոպէին. Արխանգէլսկում նոյն օրը արևը ծագում է 9 ժամ 50 րոպէին, իսկ մայր է մտնում 1 ժամ 58 րոպէին։ Ո՞րքանով ցերեկը դեկտեմբերի 1-ին Թիֆլիսում երկար է, քան թէ Արխանգէլսկում։

9. ՏՈԿՈՍ ՀԱՇԻՒԵԼՈՒ ԽՆԴԻՐՆԵՐ

780 100 ռուբլին տարեկան բերում է 5 ռուբ. շահ։ Որքա՞ն շահ կը բերէ մի տարում՝ 700 ռուբ., 1900 ռ., 32500 ռ., 750 ռ., 3512 ռ., 4648 ռ.։

781 100 ռուբլին տարեկան բերում է 7 ռուբ. շահ։ Որքա՞ն շահ կը բերէ՝ 600 ռուբլին 3 տարում, 950 ռուբ. 50 տարում, 547 ռուբլին 8 տարում։

782 100 ռուբլին տարեկան բերում է 6 ռուբ. շահ։ Որքա՞ն շահ կը բերէ՝ 600 ռուբ. 3 ամսում, 1500 ռուբ. 7 ամսում, 1564 ռուբ. 2 տարի 5 ամսում։

783 Որքա՞ն շահ կը բերէ 8 տարում 7500 ռուբլի դրամագլուխը, եթէ որ $6^0/_0$-ով է տրուած։

784 Որքա՞ն կը դառնայ 7300 ռուբ. դրամագլուխը 2 տարի 6 ամսում, եթէ որ տրուած է $6^0/_0$ով։

785 Որքա՞ն շահ կը ստանան 5700 ռուբլուց, եթէ որ $4^0/_0$ով 3 ամիս ժամանակով է տրուած։

786 Որքա՞ն կը դառնայ 1700 ռուբ. դրամագլուխը, եթէ որ $6^0/_0$-ով 8 ամիս ժամանակով է տրուած։

787 Վաճառականը գնեց 1280 ռուբլու թէյ. բոլոր թէյը ծախելուց նա $20^0/_0$ վաստակեց։ Որքա՞նով ծախեց այդ թէյը։

788 Պատերազմի դաշտում զինուորներից $15^0/_0$-ը սպանուեց։ Քանի՞ զինուոր կենդանի մնաց, եթէ ամբողջ բանակում կար 8400 մարդ։

789 400 ռուբլուց տարեկան 20 ռուբ. շահ են ստանում։ Քանի՞ տոկոսով է տուած այդ դրամագլուխը։

790 11560 ռուբլուց տարեկան 578 ռուբ. շահ են ստանում։ Քանի տոկոսով է տրւած այդ դրամագլուխը։

791 800 ռուբլին 5 տարում 240 ռ. շահ է բերում։ Քանի տոկոսով է տրւած այդ դրամագլուխը։

792 5200 ռուբլին 8 ամսում 208 ռուբ. շահ է բերում Քանի տոկոսով է տրւած այդ դրամագլուխը։

793 345 ռուբլին տարեկան 13 ռուբ. 80 կոպ. շահ է բերում։ Քանի տոկոսով է տրւած այդ դրամագլուխը։

794 520 ռուբլին 4 տարում 145 ռուբ. 60 կ. շահ է բերում։ Քանի տոկոսով է տրւած այդ դրամագլուխը։

